ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ

Նվարդ Գրիգորյան
Աննա Հակոբջանյան
Մերի Գրիգորյան

Ներածություն

Ժողովրդական ասացվածքների վերլուծությունը ոչ միայն հայ բանահյուսության, այլև արդի հոգեբանական գիտության մեջ ազգային ինքնության և նրա դրսևորման տարբեր ձևերի (համոզմունքներ, դիրքորոշումներ, վարքի մոդելներ և այլն) հիմնախնդիրների ուսումնասիրության համար կարող է նշանակալի դեր ունենալ՝ հատկապես ինքնության կառուցման մեջ «մշակութային հիշողության» տեսանկյունից: Այս հոդվածում մենք փորձել ենք վերլուծել հայկական ասացվածքները՝ դուրս բերելով դրանցում արտացոլված մարդու կենսագործունեության ոլորտները, ինչպես նաև դրանցում թաքնված «հաղորդագրությունները», որոնք հիմք են ծառայում համոզմունքային դաշտի ձևավորման համար:

Ազգային ինքնություն և բանահյուսություն

Աշխարհի բոլոր հին ժողովուրդների, այդ թվում և հայ դպրության սկիզբ է հանդիսացել բանահյուսությունը, որը համարվում է բանավոր գրականություն, և այդ գրականության գաղափարական բովանդակությունը խորապես ազգային է ու համամարդկային [3]:

Ժողովրդական բանահյուսությունն ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը, փոխանցվելով սերնդեսերունդ, հասել է մինչև մեր օրերը: Ա. Մկրտչյանի վերլուծությամբ տարբեր պատմահայեցողություն ունեցող գիտնականներ պնդում են, որ հայության ոգու պատմությունը ճիշտ ըմբռնելու համար պետք է, առաջին հերթին, ուսումնասիրել ոչ թե եկեղեցական կամ կրոնական գրականությունը, որն, անշուշտ, նույնպես ուսումնասիրման արժանի է, այլ «բնության ազդեցությամբ» ստեղծված ժողովրդական տարաբնույթ ստեղծագործությունները և հետագայում՝ դրանցից սկիզբ առած աշխարհիկ բովանդակությամբ գրավոր դպրությունը [նույն տեղում]:

Դիտարկենք բանահյուսության որոշ ձևեր, որոնք ստեղծվել են ազգային ինքնագիտակցության ձևավորման արդյունքում: Հայ բանագիտության մեջ ժողովրդական բանահյուսությունը բաժանվում է երկու սեռի՝

վիպական և քնարական: Վիպական բանահյուսությունը հանդես է գալիս կառուցվածքային երկու դրսևորմամբ. սյուժետային՝ ծավալուն կառուցվածքով և անսյուժե՝ ասութաբանական-բանաձևային կառուցվածքով: Սյուժետային կառուցվածքով վիպական բանահյուսության մեջ մտնում են առասպելը, վիպական զրույցը, ժողովրդական վեպը, վիպերգը, հեքիաթը, առակը, ավանդությունը, կենցաղային ու սնահավատական զրույցը, երգիծական մանրապատումը և այլն [1]:

Առած-ասացվածքները վիպական բանահյուսության այնպիսի ստեղծագործություններ են, որոնք մեկ-երկու նախադասությամբ, հաճախ նաև մի քանի բառով արտացոլում են կյանքի զանազան կողմերի ու երևույթների վերաբերյալ մարդկային պատկերացումները և անմիջական պատասխան են տալիս ժողովրդին հուզող ամենատարբեր հարցերին: Դրանք ժողովրդական խոսքի բանաձևային կառույցներ են, որոնք ծնվել են նրանց դարավոր փորձից, ուղենիշ են եղել կյանքում, դաստիարակել, օգնել են ավելի լիարժեք ճանաչել մարդուն և նրան շրջապատող աշխարհը: Թեև առածներն ու ասացվածքները կառուցվածքով նույնն են, դրանք իրարից տարբերվում են իրենց իմաստն արտահայտելու ձևով: Առածն այլաբանական ստեղծագործություն է և ասելիքը վերարտադրում է այլաբանորեն, իսկ ասացվածքը՝ ուղղակիորեն [1, 3]:

Բանահյուսության տարբեր ժանրերից (հեքիաթներ, հանելուկներ, կատակներ) ասացվածքներն ամենահամառոտն ու խտացվածն են, բայց ոչ ամենապարզը: Ասացվածքների իմաստնությունը հազարավոր տարիներ ուղեկցել է ամբողջ աշխարհի մարդկանց իրենց հաղորդակցման, աշխատանքային և կյանքի մնացած ոլորտներում: Ասացվածքները պարունակում են մարդկանց ամենօրյա փորձն ու դիտարկումները, որոնք արտահայտված են կարճ և հստակ լեզվով: Լինելով հակիրճ և ամփոփ՝ ասացվածքները հեշտ են հիշվում և միշտ կարող են օգտագործվել որպես բանավոր ու գրավոր խոսքի արտահայտման արդյունավետ միջոց: Ասացվածքները ստեղծվել են դեռևս նախագիտական շրջանում, բայց պահպանում են իրենց կարևորությունն անգամ ժամանակակից հասարակության մեջ: Չնայած որոշ ասացվածքներ, որոնց իմաստն ու հաղորդագրությունն այլևս չեն համապատասխանում այսօրվա պահանջներին և չեն օգտագործվում, բազմաթիվ ասացվածքներ ներկայում դեռևս օգտագործվում են մարդկանց շրջանում:

Ասացվածքներն ունեն քննադատական և դաստիարակչական մեծ նշանակություն. դրանք յուրահատուկ ավանդներ են, որոնցով դարերի ընթացքում կյանքում առաջնորդվել են ժողովրդական լայն խավերը: Այսինքն՝ կարելի է ասել, որ դրանք մեծ արժեք են պարունակել և որոշակիորեն ուղղորդել մարդու վարքը: Ասացվածքներն ունեն նաև ճանաչողական և իմացական մեծ արժեք. դրանք հարուստ նյութ են տալիս ժողովրդի պատմությունն իմանալու

համար՝ արտացոլելով նրա ազգային կերպարը, կենսափորձը, ակնկալիքները, աշխարհայացքն ու հոգեկերտվածքը, կենցաղն ու հավատալիքները: Կենսակերպի բոլոր բնագավառներին վերաբերող ասացվածքներ կան, որոնք կարող են, ինչպես և կյանքը, իրար հակասող լինել: Հաղորդակցման ընթացքում ասացվածքները միանգամից ինքնաբերաբար հիշվում և օգտագործվում են, և եթե դրանք տվյալ իրավիճակի համար ճիշտ են ընտրված, ապա դառնում են հաղորդակցման արդյունավետ ռազմավարություն: Ասացվածքներն օգտագործվում են հաղորդակցման տարբեր տեսակներում՝ ընկերական զրույցի, քաղաքական ելույթների, կրոնական ճառերի ժամանակ, ամենատարբեր ստեղծագործությունների և լրատվության մեջ: Ասացվածքներն ամենուր են, և հենց սա է դրդել մի շարք հետազոտողների՝ ուսումնասիրել դրանք [8]:

Ասացվածքները, ինչպես և հանելուկները, կատակներն ու հեքիաթները, գիտակցված կամ չգիտակցված ձևով ստեղծվում են մի մարդու կողմից: Եթե որևէ մեկի պնդումը ճշմարտության կամ իմաստության տարր է պարունակում, այն կարող է տարածվել՝ սկզբում օգտագործվելով ընտանիքում, հետո գյուղում, քաղաքում, երկրում և ընդհանրապես՝ աշխարհում: Բազմաթիվ հնադարյան ասացվածքներ, կրելով որոշակի փոփոխություններ, տարածվել են աշխարհով մեկ: Ժամանակի ընթացքում ասացվածքների հեղինակները մոռացվում են, դրանք դառնում են անանուն և համամարդկային, հետևաբար, բավական դժվար է որևէ ասացվածքի ծագումն ու պատմությունն ուսումնասիրելը [8, 9]:

Հայկական ասացվածքները հորինվել և պահպանվել են հայ ժողովրդի ողջ գոյության ընթացքում, պատմական տարբեր ժամանակաշրջաններում: Ասացվածքների ճնշող մեծամասնության հիմնական աղբյուրը հասարակական կյանքն է: Դրանք կյանքի տարբեր երևույթների անմիջական գեղարվեստական դրսևորումներն են՝ ընդհանրացված և յուրովի ձևավորված: Ասացվածքների որոշ մասը կառուցվում է ժողովրդական բանահյուսության մեկ այլ ժանրի ստեղծագործության հիման վրա (հիմնականում՝ առակներ և կենդանիների մասին զրույցներ): Ասացվածքների համար որոշ չափով նյութ է տվել նաև գրականությունը, որտեղից խրատական, բարոյախոսական և այլ կարգի թևավոր արտահայտություններ տարբեր ճանապարհներով արմատացել են ժողովրդի մեջ և համապատասխան երանգ ստացել: Ասացվածք են դարձել հիմնականում այնպիսի ասույթները, որոնք իրենց նախնական ծագումով կապված են եղել բանահյուսության ավանդների հետ և բովանդակությամբ համահունչ են եղել ժողովրդի աշխարհայացքին ու հոգեկերտվածքին [4]:

Ասացվածքների ստեղծումը ճանաչողական գործընթացների արդյունք է: Յուրաքանչյուր ազգի բանահյուսություն, յուրաքանչյուր ժողովրդական հորինվածք յուրովի արտացոլում է տվյալ ազգի մտածողությունը,

ազգային կերպարը, մշակութային ու էթնիկական առանձնահատկությունները. այն ազգային ինքնության յուրահատուկ բնութագրերից մեկն է:

Որպես ազգային ինքնության, հոգեկերտվածքի և մտածողության դրսևորում՝ ժողովրդական բանահյուսության (և մասնավորապես՝ ասացվածքների) կերտման գործընթացում ժողովրդի մշակույթն ու ճանաչողական գործընթացները հասկանալու համար անհրաժեշտ միջոց է լեզուն: Լեզվի և էթնիկական խմբերի միջև փոխկապակցվածության նկատմամբ առաջին անգամ ուշադրություն է դարձվել 19-րդ դարի կեսերին Գերմանիայում, երբ էթնոհոգեբանությունը դարձավ գիտության առանձին ճյուղ: Գերմանացի հոգեբաններ Մ. Լացարուսի և Գ. Շտեյնտալի կարծիքով՝ լեզուն ազգային ոգու դրսևորումն է: Բառի միջոցով կատարվում է «ոգու միասնություն»: Այդպիսի փոխկապակցվածությունը խոսում է այն մասին, որ լեզուն պահպանում է ազգի աշխարհընկալումը, և միևնույն ժամանակ էլ հենց ինքն իրականության յուրովի արտացոլման արդյունք է: Նրանք ազգային ոգին հասկանում էին ոչ միայն որպես անհատների հոգեբանական նմանություն, այլ նաև որպես նրանց ինքնագիտակցություն [մեջբերվում է ըստ 5]:

Ըստ Դ. Մացումոտոյի՝ լեզուն այն հիմնական միջոցն է, որի օգնությամբ մենք շփվում ենք ու պահպանում տեղեկությունը [7]: Լեզուն նաև շատ կարևոր դեր է խաղում սերունդներին մշակութային ժառանգության փոխանցման գործում: Այդ պատճառով լեզուն միջմշակութային հետազոտություններով զբաղվող մի շարք գիտնականների ուշադրության կենտրոնում է: Լեզուները խիստ տարբերվում են միմյանցից, և այդ լեզվական տարբերությունները կապված են տվյալ լեզուն կրող մշակույթի սովորույթների և վարքի համընդհանուր նորմերի հետ: Լեզվի և մշակույթի փոխկապակցվածության ընկալումը կարևոր է նաև այլ մշակույթի ներկայացուցիչների հետ շփման և նրանց հասկանալու համար [6]:

Ցանկացած ազգի մշակույթ և լեզու յուրահատուկ են. որոշ լեզուներ ունեն բառեր կամ գոյականներ, որոնք մյուս լեզուներում բացակայում են: Հաճախ այն բառերը, որոնք տարբեր լեզուներում, ընդհանուր առմամբ, նույն իմաստն ունեն, տարբերվում են իրենց երանգով, հնչեղությամբ և այլ նշանակությամբ: Բացի այդ, տարբեր մշակույթի ներկայացուցիչներ նույն բառին տարբեր զուգորդություններ կարող են վերագրել: Շատ դժվար է մեկ այլ լեզվում գտնել բառեր, որոնք ունեն նույն իմաստը, նշանակությունն ու երանգը, ինչ մեր լեզվում ընտրած բառը կամ առարկան [7]:

Ասացվածքների որակական վերլուծության մեթոդաբանության նկարագրություն

Հայկական ասացվածքներում հայ ազգի էթնիկական առանձնահատկությունների, լեզվամտածողության ու հոգեկերտվածքի արտացոլումը, շատ հեղինակների հավաստմամբ, ակնհայտ է: Ներկայացվող աշխատանքի շրջանակներում մեզ հետաքրքրում է, թե ինչպես են ասացվածքներն արտացոլում համոզմունքային համակարգն ազգային ինքնության կառուցվածքում: Գիտական աղբյուրների և արդի հետազոտական դաշտի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ հայ ժողովրդական բանահյուսության մեջ եղել է ասացվածքներն ըստ թեմաների դասակարգելու փորձ [2], սակայն այդ դասակարգումը չունի վերլուծական մեկնաբանություն: Սույն հետազոտությունը ենթադրում է ասացվածքների վերլուծություն՝ դուրս բերելով ազգային բնութագրերը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդական, ինչպես նաև հայերի շրջանում կիրառություն ունեցող այլ ազգերի ասացվածքները, որոնք վերաբերում են սոցիալական կյանքի տարբեր ոլորտներին: Որպես հետազոտական խնդիրներ առանձնացվել են.

- ասացվածքների հավաքագրում,
- հավաքագրված ասացվածքների կոնտենտ վերլուծություն:
- Ասացվածքների համակողմանի վերլուծություն ապահովելու համար կոնտենտ վերլուծությունը կատարվել է ըստ տարբեր բովանդակային միավորների.
- ըստ կենսագործունեության ոլորտների՝ ասացվածքների խմբավորում,
- ըստ թեմաների՝ ասացվածքներում թաքնված իմաստի դուրսբերում:

Մեր իրականացրած ուսումնասիրության նախնական փուլում կոնտենտ վերլուծության համար ընտրվել է 250 հայկական ժողովրդական, նաև այլ ազգերի ժողովրդական, բայց հայերի շրջանում կիրառություն ունեցող ասացվածք [2, 4]: Այնուհետև բոլոր ասացվածքները մեր կողմից վերլուծվել են՝ իմաստային բովանդակությունը պարզելու նպատակով: Այս վերլուծության արդյունքում յուրաքանչյուր ասացվածքում թաքնված իմաստը դուրս է բերվել ըստ որոշակի գաղափար կրող թեմաների: Թեմաների առանձնացումից հետո կատարվել է դրանց համեմատություն՝ հեղինակների իրականացրած վերլուծությունները համադրելու նպատակով: Արդյունքում՝ որոշ ասացվածքներ, որոնց իմաստներն անհասկանալի կամ վիճելի էին, հետազոտությունից հանվել են: Հետազոտության համար

պահպանվել են միայն այն ասացվածքները, որոնց բոլոր համահեղինակները նմանատիպ իմաստներ են վերագրել:

Նախնական վերլուծության արդյունքները (արդեն մնացած 180 ասացվածքով) փոխանցվել են չորս հոգեբանից բաղկացած փորձագիտական խմբին, ովքեր ևս իրականացրել են ասացվածքների դասակարգում՝ ըստ որոշակի գաղափար կրող թեմաների:

Հետազոտության առաջին փուլում փորձագետների կողմից իրականացված վերլուծության հիման վրա ընդհանրացվել են ասացվածքների արտահայտած հիմնական իմաստները: Վերջինները մեր կողմից խմբավորվել են մարդու կենսագործունեության *վեց հիմնական ոլորտում*, որոնց ուղղված են հայկական ասացվածքները: Այդ ոլորտներն են՝ *ճանաչողություն, մարդու բնույթ, աշխատանք/գործ, հարաբերություններ, մարդ-հասարակություն, վերբնական/գերբնական ուժեր* (ոլորտներին համապատասխանող տիպական ասացվածքները տես Հավելված 1-ում):

Հետազոտության երկրորդ փուլում ասացվածքները ենթարկվել են ևս մեկ՝ ըստ թեմաների իմաստային վերլուծության: Այս փուլում իրականացված վերլուծության համար իմաստային միավորը թեման էր: Յուրաքանչյուր ասացվածք վերլուծվել է՝ դրանում թաքնված իմաստը պարունակող թեման դուրս բերելու նպատակով: Թեմաների դուրսբերման արդյունքում, համադրելով փորձագիտական խմբի կողմից իրականացված վերլուծությունները, դրանք էլ, իրենց հերթին, խմբավորվել են ավելի ընդհանուր դասակարգմամբ թեմաներում (տես Հավելված 2):

Վերլուծությունների արդյունքում մեր կողմից առանձնացվել են հիմնական ոլորտներ և թեմաների խմբեր, որոնցում դասակարգվել է վերը նշված 180 ասացվածքը: Նման դասակարգումից հետո մեր կողմից ավելացվել են նոր ասացվածքներ՝ դրանցում առկա բոլոր հիմնական թեմաների և ոլորտների առկայությունը ստուգելու համար, որի արդյունքում ասացվածքների ընդհանուր թիվը դարձել է 286: Ավելացված ասացվածքների վերլուծությունը ցույց է տվել, որ դրանց իմաստները ևս հիմնականում դասակարգվում են արդեն առկա խմբավորումներում՝ կենսագործունեության ոլորտներում կամ թեմաներում, որոշ դեպքերում առաջացան նոր թեմաներ՝ ըստ ասացվածքների իմաստային բովանդակության: Ավելացված ասացվածքների պարագայում ևս հետազոտությունից դուրս մնացին անհասկանալի կամ վիճելի իմաստներով ասացվածքները: Արդյունքում՝ վերջնական դասակարգման մեջ մնաց 260 ասացվածք:

Ասացվածքների վերլուծությունն ըստ ոլորտների և թեմաների. արդյունքների քննարկում

Ներկայացնենք վերլուծության արդյունքներն ըստ հետազոտական փուլերի: Այսպես, հիմնական վեց ոլորտը, որ առանձնացվել էին վերլուծության առաջին փուլում, հետևյալն էին.

Ճանաչողություն ոլորտը վերաբերում է սոցիալական ճանաչողությանը, մարդու՝ որևէ բան սովորելուն և գիտելիքը կյանքում կիրառելու կարողություններին: Այս ոլորտի ասացվածքների վերլուծությունը ցույց է տվել, որ տվյալ ոլորտում գերակշռում են այն ասացվածքները, որոնք ընդգրկում են տարբեր իրավիճակներում ի հայտ եկող իրադրությունների տրամաբանությունը, ցույց են տալիս տարբեր երևույթների միջև կապ, հարաբերություն: Օրինակ՝ «*Մինչև ամպը չգոռա, անձրև չի գա*», *«Մեջքդ ծուռ քարի դեմ անես, մեջքդ էլ կծռվի»:*

Մարդու բնույթ ոլորտը վերաբերում է մարդու անձնային և բնավորության տարբեր գծերին ու հատկանիշներին: Վերլուծությունը ցույց է տվել, որ այս ոլորտում ասացվածքների մեջ շեշտադրվում են մարդու բնավորության, արժեքների, կենսակերպի, մարդկանց տարբերությունների առանձնահատկությունները: Օրինակ՝ *«Մեկ կա՝ հազար արժե, հազար կա՝ մեկ չարժե», «Առյուծը առյուծ է մնում նույնիսկ վանդակում»:*

Աշխատանք/գործ ոլորտն, իհարկե, վերաբերում է աշխատանքի նկատմամբ դիրքորոշումներին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ասացվածքներում շեշտադրվում են գործի արժևորման, կարևորության, աշխատանքի գնահատման դիրքորոշումները, գործելիս գիտակցական և հետևողական վարք ցուցաբերելու մոտեցումը: Օրինակ՝ «*Ով աշխատի, նա կուտի», «Ամառը թե չքրտնես, ձմեռը չես լիանա», «Գործը էշ է, որ բիզ չտաս, չի գնա»:*

Հարաբերություններ ոլորտը ցույց է տալիս միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները: Մեր վերլուծություններից պարզվել է, որ միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվում են ինչպես եսասիրական, այնպես էլ այլասիրական դիրքորոշումներ: Կարևորվում են ուրիշների նկատմամբ զգոնություն ցուցաբերելը, սերը, հավատարմությունը, մարդուն ընդունելը, քաղաքավարությունը և այլն: Օրինակ՝ «*Աղջի՛կ, քեզ եմ ասում, հա՛րս, դու հասկացիր», «Առաջ մորթուս, հետո որդուս»,* «*Կեսուրը մեռավ, հարսին տեղը լայնացավ»:*

Մարդ-հասարակություն ոլորտը հիմնականում արտացոլում է մարդու դերը և փոխհարաբերություններն ավելի լայն շրջանակում՝ հասարակական մակարդակում: Վերլուծված ասացվածքներում հանդիպում են անարդարության, անհավասարության, համագործակցության, միասնականության, պատվի, սեփական շահի, խորամանկության և մի շարք այլ թեմաներ:

Օրինակ՝ «*Կուշտը սովածի վիճակը չի հասկանա*», «*Տաշած քարը գետնին չի մնա*», «*Մարդու աչքը դուրս գա, անունը դուրս չգա*»:

Գերբնական/վերբնական ուժեր ոլորտը ցույց է տալիս մարդկանց՝ վերբնական ուժերի նկատմամբ վերաբերմունքը, հավատալիքներն ու համոզմունքները, որոնցով նրանք առաջնորդվում են առօրյա կյանքում: Կարելի է տեսնել, որ մեր կողմից վերլուծված ասացվածքներում կան այնպիսիները, որոնցում արտացոլված են ճակատագրի, բախտի, հավատքի թեմաները: Օրինակ՝ «*Չոփը եկավ քոռին կպավ*», «*Ում բախտը ծռվեց, նրա ձին ախոռում էշ կդառնա*»:

Ստորև կշարադրենք այն հիմնական *թեմաները*, ըստ որոնց դասակարգվեցին ասացվածքները դրանց իմաստային վերլուծության արդյունքում: Ինչպես արդեն նշել էինք, թեմաների անվանումներն առաջարկել ենք մենք՝ պայմանավորված ասացվածքի մեջ թաքնված իմաստներով՝ «հաղորդագրություններով»: Հիմնական թեմաների ներկայացման հետ միասին կներկայացնենք նաև, թե որ թեմաները որ ոլորտներում են առավել հաճախ հանդիպում: Դա հնարավորություն կտա մեզ ընդլայնելու առաջին փուլի վերլուծությունը՝ ցույց տալով, թե կենսոլորտներում որոնք են գերակշռող թեմաները:

Կենսափորձ թեման դուրս բերվեց, քանի որ ասացվածքներում շատ է հանդիպում կյանքում նշանակալի իրադարձությունների արժևորմամբ փորձի փոխանցումը: Թեման ներառում է բոլոր այն ասացվածքները, որոնցում արժևորվում, գնահատվում է նախկին փորձը: Օրինակ՝ «*Մինչև չգա եփինը, չի հիշվի առաջինը*», «*Աչքը տեսածից է վախում*»: Այս թեմայում առանձնացված ասացվածքները հանդիպում են առավելապես *ճանաչողություն, մարդ-հասարակություն* ոլորտներում: Կարելի է ենթադրել, որ աշխարհաճանաչման գործընթացում, ինչպես նաև հասարակական հարաբերություններում, հայի համոզմունքներում գերակայում է սեփական փորձառությանը վստահելու միտումը:

Մարդու տեսակի կայունություն թեման ցույց է տալիս, որ ասացվածքներում շատ է շեշտադրվում մարդու բնույթի կայունությունը՝ անկախ կյանքի իրադրություններից: Վերլուծված ասացվածքներից այս թեմայի մեջ են ներառվել նրանք, որոնք արտահայտում են կայունությունը տարբեր իրադրություններում: Օրինակ՝ «*Սև շունը չի սպիտակի*», «*Առյուծը առյուծ է մնում նույնիսկ վանդակում*»: Այս թեմայի ասացվածքները հանդիպում են հիմնականում *մարդու բնույթ* ոլորտում: Կարելի է ենթադրել, որ հայերի համոզմունքների համակարգում արմատացած են մարդու բնութագրերի կայունության պատկերացումները, ինչը շատ դեպքերում, մասնավորապես, կենսափորձի հիման վրա ձևավորված դատողությունների շրջանակում, ընկալվում է որպես վարքի ինդիվիդուալիստական միտում:

Ներքին և արտաքին որակների անհամապատասխանություն թեման ցույց է տալիս, որ ասացվածքներում առանձնանում են մարդու կերպարին բնորոշ հակասական հատկանիշներ, ներքին որակների և վարքի անհամապատասխանության շեշտադրումներ: Այս տիպի ասացվածքների մեջ առկա է անհամապատասխանության, չափի զգացողության քննադատություն, ինչպես նաև երևույթների նկատմամբ խորաթափանց լինելու զգուշացում: Նշված թեմայի ասացվածքները հանդիպում են հիմնականում *ճանաչողության, մարդու բնույթ, հարաբերություններ* ոլորտներում: Օրինակ՝ *«Սուսիկ-փուսիկի քացին ուժեղ կլինի», «Խոզի քթին ադամանդ չի սազի»:*

Խելքի, մտքի, իմաստնության արժևորում կյանքում թեմայի դուրսբերումը պայմանավորված էր ասացվածքներում մարդու մտավոր կողմի, խելքի, գիտակցված վարքի կարևորությամբ և արժևորմամբ: Մասնավորապես, իմաստով բավական շատ է շեշտադրվում կյանքի տարբեր պայմաններում, փոխհարաբերություններում, ինչպես նաև ինքնընկալման և ինքնավերաբերմունքի մեջ ներառված, գիտակցված, վերլուծված մտքի, խոսքի, գործի կարևորությունը: Օրինակ՝ *«Թող չսեն, թե էշ է, թող ըսեն, թե՝ գեշ է», «Խելոքի հետ կորցրածը կորած չէ, հիմարի հետ գտածն է կորած», «Խոսքի վերջը սկզբից է երևում»:* Այս թեմային վերաբերող ասացվածքներն առանձնանում են *ճանաչողության, հարաբերությունների և մարդու բնույթին* վերաբերող ոլորտներում: Վերլուծելով ասացվածքները՝ կարելի է ասել, որ այս թեմաները պարունակող ասացվածքները նորմատիվ և գնահատող բնույթ ունեն:

Աշխատանքի, արհեստի արժևորում և գնահատում թեմայով առանձնացված ասացվածքներում կարևորվում է արհեստ ունենալու, աշխատելու կարևորությունը մարդու կյանքում *(Օրինակ՝«Ով աշխատի, նա կուտի», «Աշխատողը անոթի չի մնա», «Արհեստը կաթ-կաթ աղբյուր է, եթե չվարարի, չի էլ պակասի»)*: Միևնույն ժամանակ, այստեղ ենք դասակարգել այն ասացվածքները, որտեղ շեշտադրված են գործին ուղղված, գործի արդյունավետությունն ապահովող անձնային որակներ. աշխատասիրությունը, ջանասիրությունը *(«Ամառը թե չքրտնես, ձմեռը չես լիանա»)*, համառությունը, համբերատարությունը, հետևողականությունը *(«Իշից բռնացրա, որ ձիուն հասնես», «Գործը էշ է, որ բիզ չտաս, չի գնա»)*, գործի կազմակերպումն ու պլանավորումը, պարտականությունների տարանջատումը *(«Այսօրվա գործը վաղվան մի թող», «Ճաշ եփողները որ շատ լինեն, ճաշը կամ աղի կանեն, կամ անալի»):* Այս թեմաներն, իհարկե, բնորոշ են *աշխատանք/գործ* ոլորտին: Վերլուծելով այս ասացվածքները՝ կարելի է ասել, որ, առաջին հերթին, աշխատանքը գնահատվում է որպես

նյութական բարիք ստեղծելու միջոց, և հենց այդ արդյունքն է արժևորվում աշխատանքի վերաբերյալ համոզմունքներում, այլ ոչ թե մարդու զարգացման, հոգևոր ուժի և կատարելագործման հնարավորություններն աշխատանքի միջոցով:

Հետևյալ թեմաները՝ *զգոնություն, ճկունություն, շրջահայացություն, խորամանկություն,* որոնք կարելի է միավորել որպես սոցիալական իրականության վրա մարդու ներգործման ուժի հնարավորության և մարտավարության նկարագրություն, արտահայտում են դժվարին իրավիճակների հաղթահարման ժամանակ մարդու վարքի և իրավիճակի վերահսկման կարևորությունը: Դրանք արտացոլող ասացվածքների օրինակներ են. *«Մունջ կատուն շատ մուկ կբռնի, քան խոսունը», «Լեզուդ կարճ պահես՝ կապդ երկար կլինի», «Շան հետ ընկերացիր, փետը ձեռիցդ մի՛ գցիր», «Եթե կուզես թշնամուդ հաղթել, նրա լեզուն սովորի»:* Այս թեմաներում առանձնացված ասացվածքները հանդիպում են *հարաբերություններ, մարդ-հասարակություն, ճանաչողություն* կենսոլորտներում: Վերլուծելով այս ասացվածքները՝ կարելի է ասել, որ սրանցում առկա է նորմատիվ վարքի ձևերի նկարագրություն՝ դժվար իրավիճակներում արդյունավետության և նպատակին հասնելու համար:

Սոցիալական անարդարություն, անհավասարություն թեման առանձնացվել է հասարակության մեջ սոցիալական տարբեր շերտերի ու երևույթների միջև կապերի բնորոշման արդյունքում: Ասացվածքները ներկայացնում են հասարակության տարբեր դրսևորումներում սոցիալական անարդարությունն ու անհավասարությունը: Օրինակ՝ *«Կուշտը սոված վիճակը չի հասկանա», «Աղքատն ասավ՝ կատուն ջիգյար կերավ, չհավատացին, հարուստն ասավ՝ մուկն երկաթ կերավ, հավատացին»:* Այս թեմաները հանդիպում են առավելապես *մարդ-հասարակություն* ոլորտում: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, այս թեմաների ասացվածքներում շեշտադրվում են հասարակության մեջ խավերի հնարավորությունների և դիրքերի տարբերությունները:

Մեր կողմից վերլուծված ասացվածքներում առկա էին նաև այլ թեմաներ (երախտագիտություն, ինքնահարգանք/արժանապատվություն, ընդունում/թերությունների հանդուրժում, նրբանկատություն, սեփական ուժեր/ինքնուրույնություն, հավատարմություն/նվիրվածություն, միասնություն/համագործակցություն, շահամոլություն/սեփական շահ, արժեքների կայունություն/ բարեպաշտություն և այլն), սակայն դրանք ավելի հազվադեպ էին հանդիպում և եզակի ասացվածքներում, որի պատճառով այդ թեմաները հնարավոր չէր խմբավորել: Մենք սահմանափակվեցինք վերոնշյալ թեմաների վերլուծությամբ, քանի որ այս թեմաների շուրջ

հնարավոր դարձավ խմբավորել առավել հաճախ հանդիպող տարբեր ասացվածքներ:

Այսպիսով, հիմնվելով ըստ ոլորտների և թեմաների վերլուծված ասացվածքների վերլուծությունների վրա՝ կարելի է եզրակացնել, որ հայերի համոզմունքների համակարգում արտահայտված են հետևյալ պատկերացումները.

- Մարդու կյանքում աշխատանքի անհրաժեշտությունը և արժևորումը՝ նյութական բարիքի ստեղծման և դրա շնորհիվ գոյատևման շեշտադրմամբ: Շեշտադրված չէ աշխատանքի՝ որպես մարդու զարգացման և ինքնադրսևորման միջոցի, կարևորությունը:
- Մարդու կյանքում գիտակցված, մտածված, կշռադատված խոսքի, վարքի, գործի, ինչպես նաև վարքի վերահսկման կարևորում և շեշտադրում: Գրեթե շեշտադրված չէ վարքում բանականության, ինքնաբուխ և ստեղծագործ լինելու նշանակությունը:
- Միջանձնային և հասարակական հարաբերություններում շեշտված է ուրիշի նկատմամբ զգոնության, ճկունության, իսկ նմանի նկատմամբ՝ նվիրվածության և հավատարմության նշանակությունը:
- Կյանքի դժվար իրավիճակներում առավել շատ շեշտված է սեփական ուժերի և ինքնուրույնության նշանակությունը, քան ուրիշի օգնության և աջակցության հնարավորությունը:

Բացի ասացվածքների բովանդակային հետևություններից, կարելի է նաև դուրս բերել, որ ասացվածքներում արծարծվում են հետևյալ բնույթի թեմաներ՝ նորմատիվ, այսինքն՝ ինչպիսին պետք է լինել և ինչպես պետք է վարվել, քննադատական՝ ինչպիսին չպետք է լինել և ինչպես չպետք է վարվել, փաստող՝ ինչպես, որ կա իրադարձությունների բնականոն հոսքը, խորհրդատվական՝ ինչպես լավ կլինի մտածել և գործել, արժեք ցույց տվող՝ ցանկալի և իդեալական վարքի ձևեր:

Այս աշխատանքում կատարված վերլուծությամբ չենք հավակնում ամբողջովին վերհանել ասացվածքներում պարունակվող իմաստները և բացատրել դրանց դերը մարդու կենսագործունեության մեջ: Փորձել ենք ընդամենը ընդհանրացնել մեր կողմից վերլուծված ասացվածքների իմաստային այն շեշտադրումները, որոնք առավել ցայտուն են այդ ասացվածքներում:

Ասացվածքների այսպիսի վերլուծությամբ հնարավոր է ուսումնասիրել մարդկանց սոցիալական վարքի այն կողմերը, որոնք գործում են հիմնականում առաջնային սոցիալացման արդյունքում ենթագիտակցական մեխանիզմներով և ոչ լիարժեք գիտակցված պատկերացումների հիման վրա: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ նման վերլուծությունն ունի

նաև որոշ սահմանափակումներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ նոր հետազոտությունների համար: Մասնավորապես, հետաքրքիր կլինի տարբեր ազգերի ասացվածքների համեմատումը, որն առավել վառ ցույց կտա տվյալ ազգին բնորոշ առանձնահատկությունները՝ տարբեր ազգերի ասացվածքներում նմանություններն ու տարբերությունները համեմատելու միջոցով: Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ միայն բանահյուսության ձևերով, մասնավորապես ասացվածքներով, հնարավոր չէ լիարժեքորեն վեր հանել սոցիալական վարքի առանձնահատկությունները, քանի որ դրանք արտահայտում են վարքի ավանդական ձևեր և համոզմունքներ: Հասարակության զարգացման և արդիականացման նոր պայմաններում առաջ են գալիս զարգացման նոր մարտահրավերներ, որոնք առավելապես պայմանավորված են ժամանակակից տեղեկատվական միջավայրի հագեցվածությամբ: Վերջիններիս ներմուծման պարագայում մարդու աշխարհաճանաչման գործընթացում ավանդական պատկերացումները կարող են ենթարկվել և ենթարկվում են փոփոխությունների: Այդ պատճառով ժամանակակից հասարակության մեջ մարդու սոցիալական վարքն ու պատկերացումներն ուսումնասիրելու համար սխալ կլինի սահմանափակվել միայն բանահյուսության ձևերի ուսումնասիրմամբ: Անհրաժեշտ է նաև ուսումնասիրել ժամանակակից տեղեկատվական միջավայրի, սոցիալական ինստիտուտների, մարդկանց բանավոր պատմության (նարատիվների) և սոցիալական պրակտիկայում ստեղծվող ու վերարտադրվող իմաստները, «հաղորդագրությունները»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգությունը: Ժողովրդական բանահյուսություն*. Հասանելի է www.mincult.am/heritage/1/am/?nid=125
2. **Ղանալանյան, Ա**. *Առածանի,* Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960:
3. **Մկրտչյան, Ա**. *Հինգերորդ դարի հայ դպրություն*, Երևան, 1968:
4. **Օհանյան, Գ.** *Առածանի, հայկական ժողովրդական առածներ*: Հեղինակային հրատարակություն, 2009:
5. **Борисов, Р.** *Диалог языка и этнической идентичности в поликультурном образовательном пространстве*. Հասանելի է http://sun.tsu.ru/mminfo/000063105/299/image/299_154-157.pdf
6. **Дробижева, Л.** Этническое самосознание русских в современных условиях: идеология и практика, *Советская этнография*, 1991, N 1, с. 3-13.
7. **Мацумото, Д.** *Психология и культура*, СПб., Питер, 2003.
8. **Mieder, W.** *Proverbs*: a Handbook, Greenwood Publishing Group, 2004.
9. **David, O.** A Sociopsychological Conception of Collective Identity: The Case of National Identity as an Example, *Personality and Social Psychology Review,* 2009.

Ասացվածքների դասակարգումն ըստ ոլորտների

Հավատ գերբնական/ վերբնական ուժերին	Ճանաչողություն	Մարդու բնույթ	Աշխատանք/ գործ	Մարդ – հասարակություն	Հարաբերություններ
Չոփը եկավ քոռին կպավ:	Մինչև ամպը չգոռա, անձրև չի գա:	Օձը մնում է օձ, էգ լինի, թե՝ որձ:	Եթե չգիտես ինչ անես, ոչինչ մի արա:	Մի ծաղկով գարուն չի գա:	Երեխուն գործի դիր, հետևից գնա:
Խաչը տերը զորավոր կանի:	Թանկից էժանը չկա:	Խաչն էլ է քոնը, զորությունն էլ:	Փեշակը ոսկի ա:	Գայլի անունն է դուրս եկել, աղվեսը աշխարհը քանդեց:	Լեզուդ կարճ պահես՝ կապդ երկար կլինի:
Ում բախտը ծռվեց, նրա ձին ախոռում էշ կդառա:	Խաղի վերջը կռիվ է դառնում, ծիծաղինը՝ լաց:	Շան պոչը կտրելով անմեղ գառ չի դառնա:	Արհեստավորի երեխան մինչև կեսօր սոված կմնա:	Աղքատությունն ամոթ չէ, կեղտոտությունն է ամոթ:	Մածունը կատուն է կերել, թակը երեխան:
	Ամեն փայլող բան ոսկի չէ:	Շան պոչը յոթը տարի կաղապար դրին, էլի էն կեռ պոչն է:	Թամբալը գիտի, թե հացը ծառի վրա է աճում:	Աշխարհը ծով, ես՝ ծարավ:	Շան բնի կողքին աղվես չի ապրի:
	Մեջքդ ծուռ քարի դեմ անես, մեջքդ էլ կծռվի:	Սև շունը չի սպիտակի:	Վռազողի կնիկը տղա չի բերի:	Կուշտը սոված վիճակը չի հասկանա:	Շան հետ ընկերացիր, փետը ձեռիցդ մի՛ գցիր:
	Փոս փորողը ինքն է փոսն ընկնում:	Շունը կաղալով չի սատկի:	Ով աշխատի, նա կուտի:	Տաշած քարը գետնին չի մնա:	Շան անունը տուր, փետը վերցրու:
	Մինչև չգա ետինը, չի հիշվի առաջինը:	Շունը հաչելով կմեծանա:	Արհեստը կաթ-կաթ աղբյուր է, եթե չվարարի, չի էլ պակասի:	Մարդու աչքը դուրս գա, անունը դուրս չգա:	Շունն իր տիրոջ վրա չի հաչի:
	Առարկայի նորն է լավ, իսկ ընկերոջ՝ հինը:	Գայլը երբեք չի կշտանա:	Արհեստ ունեցողը մինչև կեսօր է սոված, չունեցողը՝ մինչև իրիկուն:	Խեղճին խեղճ ասողը շատ կլինի, ձեռք մեկնողը՝ քիչ:	Շունը շան միս չի ուտի:

	Սուտը սուտ ասողի տունն ա քանդում:	Ձուկն առանց փուշ չի լինի:	Աշխատողը անոթի չի մնա:	Եթե ինքդ բերք չունենաս, ուրիշի բերքին հենակ կշինեն:	Կեսուրը մեռաւ, հարսին տեղը լայնացաւ:
	Ինչ ցանես, այն էլ կհնձես:	Առյուծը առյուծ է մնում, նույնիսկ վանդակում:	Մունջ կատուն շատ մուկ կբռնի, քան խոսունը:	Լավ ձիու գարին են ավելաց-նում, վատինը՝ թակը:	Էշը ինքն է, խոտը ուրիշին առջեւ կը դնէ:
	Երկար լեզու ունեցողը կարճ մտքեր է ունենում:	Աղբի վրա բուսավ, բայց վարդ բուսավ:	Ուրիշի ձեռքին նայողը սոված կմնա:	Աղքատն ասավ՝ կատուն ջիգյար կերավ, չհավա-տացին, հարուստն ասավ՝ մուկն երկաթ կերավ, հավա-տացին:	Ագռավի ճուտը իր մոր համար քաղցր է:
		Մեկ կա՝ հազար արժե, հազար կա՝ մեկ չարժե:	Ամառը թե չքրտնես, ձմեռը չես լիանա:	Շիտակ ասողը տեր չունի:	Գայլի հետ ընկերացի, դագանակը ձեռիցդ մի՛ գցիր:
		Մարդ կա՝ մարդ ա, մարդ էլ կա՝ զարդ ա:	Այսօրվա գործը վաղվան մի թող:	Գյուղ կանգնի, գերան կկոտրի:	Աղջի՛կ, քեզ եմ ասում, հա՛րս, դու հասկացիր:
		Խաչը իմն է, զորությունը ես գիտեմ:	Իշից բռնացրա, որ ձիուն հասնես:		Միայն օձի փոքրը չի սիրվում:
		Շունը հավա-տարիմ է, կատուն՝ գող:	Գործը էշ է, որ բիզ չտաս, չի գնա:		Եթե կուզես թշնամուդ հաղթել, նրա լեզուն սովորիր:
			Ճաշ եփողները որ շատ լինեն, ճաշը կամ աղի կանեն, կամ անալի:		Վարդը սիրողը փուշն էլ պետք է սիրի:

			Արհեստը կաթ-կաթ աղբյուր է, եթե չվարարի, չի էլ պակասի:		Ձեռք մեկնողի ձեռքից բըռնի, որ նամարդ չասեն:
			Աշխատողը անոթի չի մնա:		Մարդու այիբը երեսով չեն տա:
			Ինչ ցանես, այն էլ կինձես:		Էշը իր բեռից չէր դժգոհ, այլ տիրոջ ձեռի բիզից:
					Կաղ տիրոջը ես ծառա – ես էլ կաղ դառա:
					Տո՛ւր ինչպես արևը, դրանից արիները կզորանան, չարիները կմոխրանան:
					Առաջ մերը, հետո մերոնցը:
					Առաջ մորթուս, հետո որդուս:
					Հաց ու գինի ունիս՝ իմ սերը դուն ես, հաց ու գինի չունիս՝ իմ դևը դուն ես:
					Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի:
					Հարևանիդ ցանկացիր հավ, որ Աստված քեզ տա կով:

Ասացվածքների դասակարգումն ըստ թեմաների

I. Կենսափորձ
Մինչև չգա ետինը, չի հիշվի առաջինը:
Մինչև նորը չգա, հին արժեքը չի իմացվի:
Ջուրն ընկնողն անձրևից չի վախենա:
Մի շան կերած թակը մեկելին խրատ չէ:
Աչքը տեսածից է վախում:
Ծովն անցկացողը առվում չի խեղդվի:

II. Տեսակի կայունություն
Շան պոչը կտրելով անմեղ գառ չի դառնա:
Շան պոչը յոթը տարի կաղապար դրին, էլի էն կեռ պոչն է:
Սև շունը չի սպիտակի:
Առյուծը առյուծ է մնում նույնիսկ վանդակում:
Օձը մնում է օձ, էգ լինի, թե՝ որձ:
Շունը հավատարիմ է, կատուն՝ գող:

III. Ներքին և արտաքին որակների անհամապատասխանություն
Էշն էն էշն է, փալանն է փոխված:
Սուսիկ-փուսիկի քացին ուժեղ կլինի:
Խոզի քթին ադամանդ չի սազի:
Ամեն փայլող բան ոսկի չէ:

IV. Խելքի, գիտելիքի, իմաստնության արժևորում կյանքում և հարաբերություններում
Լավ է գիտունին գերի, քան անգետին սիրելի:
Թող չսեն, թե էշ է, թող ըսեն,թե՝ գեշ է:
Աստված որ ուզում ա մեկին տունը քանդե, առաջ խելքն ա առնում:
Լավ է կույր լինես աչքով, քան մտքով:
Իմաստուն խոսքի տերը կմեռնի, բայց խոսքը չի մեռնի:
Խելոքի հետ կորցրածը կորած չէ, հիմարի հետ գտածն է կորած:
Եթե չգիտես ինչ անես, ոչինչ մի արա
Խոսքի վերջը սկզբից է երեւում:

V. Արհեստի արժևորում, աշխատանքի գնահատում
Ամառը թե չքրտնես, ձմեռը չես լիանա:
Գործը էշ է, որ բիզ չտաս, չի գնա:
Ինչ ցանես , այն էլ կհնձես:
Ով աշխատի, նա կուտի
Աշխատողը անոթի չի մնա:

Փեշակը ոսկի ա:
Արհեստավորի երեխան մինչև կեսօր սոված կմնա:
Արհեստը կաթ-կաթ աղբյուր է, եթե չվարարի, չի էլ պակասի:
Արհեստ ունեցողը մինչև կեսօր է սոված, չունեցողը՝ մինչև իրիկուն:
Թամբալը գիտի, թե հացը ծառի վրա է աճում:
Աղքատությունն ամոթ չէ, կեղտոտությունն է ամոթ:
Վռազողի կնիկը տղա չի բերի:
Իշից բռնացրա, որ ձիուն հասնես:
Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնի:
Այսօրվա գործը, վաղվան մի թող:
Ճաշ եփողները որ շատ լինեն, ճաշը կամ աղի կանեն, կամ անալի:

VI. Զգոնություն, շրջահայացություն, ճկունություն, խորամանկություն
Լեզուդ կարճ պահես՝ կապդ երկար կլինի:
Մունջ կատուն շատ մուկ կբռնի, քան խոսունը:
Ճիշտ խոսողի ձին պիտի թամբած լինի:
Եթե կուզես թշնամուդ հաղթել, նրա լեզուն սովորիր:
Մարդը լեզվով կբռնվի, անասունը՝ սանձով:
Որ գյուղը գնաս, էն տեղի գդակը դիր:
Շան հետ ընկերացիր, փետը ձեռիցդ մի՝ գցիր:
Շան անունը տուր, փետը վերցրու:
Ոսկոր բերող շունը ոսկոր էլ կտանի:
Գայլի հետ ընկերացի, դագանակը ձեռիցդ մի՝ գցիր:
Գայլի հետ ախպերություն չի արվի:
Եթե կուզես թշնամուդ հաղթել, նրա լեզուն սովորիր:
Մարդը լեզվով կբռնվի, անասունը՝ սանձով:
Դուզ խոսողի գլուխը ծակ ա:
Շիտակ ասողը տեր չունի:
Շատ հաչան շունը ոչխարին գել կբերի:
Երկու աչքիդ մեկին մի՛ հավատալ: - հեռատեսություն

VII. Պատճառ-հետևանք
Մարդու քաշածը իր խելքից է:
Փոս փորողը ինքն է փոսն ընկնում:
Անխիղճ մարդի հացը երկաթ կդառնա:
Լավ ձիու գարին են ավելացնում, վատինը՝ թակը

VIII. Սոցիալական անարդարություն/անհավասարություն
Մածունը կատուն է կերել, թակը՝ երեխան:
Աշխարհը ծով, ես՝ ծարավ:
Կուշտը սոված վիճակը չի հասկանա:
Աղքատն ասավ՝ կատուն ջիգյար կերավ, չհավատացին, հարուստն ասավ՝ մուկն երկաթ կերավ, հավատացին: